ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/18

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Բողոքաբեր՝ «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Մ. Խուրշուդյանի, Ս. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից 05.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2020թ.-ի ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրության (որոշման) 8-րդ և 9-րդ կետերով կայացված «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել հանձնաժողովին վերանայել մրցույթի մասնակիցներին հաջորդաբար տեղեր զբաղեցնելու որոշումը և վերանայել բանակցությունների փուլը՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 06.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/18 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/18 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/18 համարի ծածկագիրը և 17.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.03.2020թ.-ին:

3. <u>«ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 05.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մասնակցել է 06.12.2019թ-ին գնանշման հարցման ընթացակարգով բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի թիվ մեկ չափաբաժնին: Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպված էր Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա 19.12.2019թ. տեղի է ունեցել բանակցություններ: Բանակցություններին մասնակցել են բոլոր երեք մասնակիցները «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲ և «Մ.Լ-Ն.Ֆարմ» ՍՊ Ընկերությունները: Բանակցությունների ընթացքում «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊ Ընկերության տնօրենը նկատելով, որ մյուս մասնակիցների գները նվազեցնում են նաև ինքնարժեքի իջեցման հաշվին տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին, որ խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հողվածի 10-րդ մասը, որը իր լիազոր մարմնից ճշտումների համաձայն պետք է պահպանվեր: Հանձնաժողովը հերքում է և չհամաձայնվելով օրենքի վերը նշված հոդվածի հետ հայտարարում, որ մասնակիցները կարող են նվազեցումներ անել ցանկացած չափով: Արդյունքում երեք մասնակիցներն էլ խախտում են օրենքի կետը: Բանակցության ընթացքում չունենալով հնարավորություն փաստաթղթային ձևով ապացուցելու գնումների օրենքի վերը նշված հոդվածի 10-րդ մասի պահպանման պարտադիր պայման լինելու հանգամանքը (քանի որ Ընկերության ճշտումները հեռախոսազանգով էին, ՖՆ թեժ գծի շրջանակներում), չունենալով նաև այդ ժամանակահատվածում բողոքարվելու հնարավորություն, ուստի «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը բանակցության ընթացքում նույնպես շարժվել է գնահատող հանձնաժողովի տրամաբանությամբ և կատարել ինքնարժեքի գնի փոփոխություն:

30.01.2020թ. թիվ 2 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊ Ընկերությունը և նույն օրը 30.01.2020թ տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի մասնակիցը հայտով ներկայացնում է գնառաջարկը, որում առաջարկվող գինը ապրանքների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:»:

Վերոգրյալով պայմանավորված, «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2020թ.-ի ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրության (որոշման) 8-րդ և 9-րդ կետերով կայացված «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել հանձնաժողովին վերանայել մրցույթի մասնակիցներին հաջորդաբար տեղեր զբաղեցնելու որոշումը և վերանայել բանակցությունների փուլը՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը:

4. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությունը՝ հնարավորություն տալով «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

10.02.2020թ.-ին թիվ Մ-4840-2020 գրությամբ ներկայացնելով գրավոր դիրքորոշում և հայտնել է հետևյալը.

««ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում իրականացվել է բանակցություններ, քանի որ գնման ընթացակարգը հայտարարվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով, որ բանակցությունների ընթացքում գների նվազեցումները, մասնակիցների համաձայնությամբ, իրականացվել էին ըստ միավոր գների (ԱԱՀ-ն ներառյալ), հետևաբար գնահատող հանձնաժողովի համար տվյալ պահին ակնհայտ չէր նվազեցումները ինքնարժեքի հաշվին կատարելու փաստը: Բանակցություններից հետո՝ մասնակիցների կողմից սահմանված կարգով նոր գնային առաջարկներ ներկայացնելուց հետո, արձանագրվեց, որ բոլոր 3 մասնակիցներն էլ գները նվազեցրել են նաև ինքնարժեքի հաշվին: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ըստ գնահատող հանձնաժողովի դիտարկման,

գնային առաջարկի ձևաչափի ինքնարժեքը կարող է փոփոխվել՝ ըստ դրանում ներառված ծախսերի, ուստի գնահատող հանձնաժողովը բոլոր մասնակիցների նվազեցված գնային առաջարկները գնահատել է բավարար:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 06.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտն են ներկայացրել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն, «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն և «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

«Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 40 012 681.16 ՀՀ դրամ գումար, «Ամ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ն նշել է՝ 39 820 000 ՀՀ դրամ գումար, իսկ «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն նշել է՝ 42 475 000 ՀՀ դրամ գումար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ կայացվել է ընթացակարգի մասնակիցներին բանակցությունների հրավիրելու մասին որոշում:

Նույն արձանագրության համաձայն՝ 19.12.2019թ.-ին ժամը 16:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն կատարել 42 475 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք առաջարկելով 32 433 910 ՀՀ դրամ գումար:

30.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հունվարի 31-ից մինչև 2020 թվականի փետրվարի 4-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հայտարարության համաձայն՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 35 395 830 ՀՀ դրամ, «Ամ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ ՝ 36 103 750 ՀՀ դրամ, իսկ «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ ՝ 53 093 750 ՀՀ դրամ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 06.12.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն, թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով, որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք նշել է 40 012 681.16 ՀՀ դրամ գումար, «Ամ Մեդիքլ Գրուպ» ՍՊԸ-ն նշել է՝ 39 820 000 ՀՀ դրամ գումար, իսկ «Կոնցեռն-էներգոմաշ» ՓԲԸ-ն նշել է՝ 42 475 000 ՀՀ դրամ գումար:

Հանձնաժողովի 30.01.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ կայացվել է ընթացակարգի մասնակիցներին բանակցությունների հրավիրելու մասին որոշում: Բանակցություններին արդյունքում «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն կատարել 42 475 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ապրանքի ինքնարժեք առաջարկելով 32 433 910 ՀՀ դրամ գումար:

30.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հունվարի 31-ից մինչև 2020 թվականի փետրվարի 4-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Նույն հայտարարության համաձայն՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 35 395 830 ՀՀ դրամ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 40 012 681.16 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է ոչ միայն նույն գնային առաջարկով ներկայացրած շահույթից, այլ նաև՝ արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 35 395 830 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ տալով Մասնակցին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված

ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է նաև՝ պարտավորեցնել հանձնաժողովին վերանայել մրցույթի մասնակիցներին հաջորդաբար տեղեր զբաղեցնելու որոշումը և վերանայել բանակցությունների փուլը՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքի պահանջը չի ելնում Օրենքի ու Կարգի դրույթներից: Ներկայացված պահանջի շրջանակներում գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի և բանակցությունների վերանայման գործընթաց նախատեսված չէ, իսկ Բողոքներ քննող անձը և Հանձնաժողովը որպես պետական մարմիններ ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այլ կերպ ասած՝ Բողոքներ քննող անձի՝ Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով վերապահված լիազորությունները սահմանափակված են՝ Օրենքով կամ Կարգով Հանձնաժողովին ու Պատվիրատուին վերապահված լիազորությունների շրջանակով, որոնց վերլուծությամբ, հարկ եմ համարում փաստել, որ գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի և բանակցությունների վերանայման իրավասությամբ վերջիններս օժտված չեն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ:

Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ տալով Մասնակցներին ներկայացնել ինքնարժեքից ցածր գնային առաջարկ, գործել է ոչ իրավաչափ, խախտելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 05.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/18 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Դադարեցնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 8-րդ և 9-րդ կետերով կայացված որոշումները:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ